# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**21 փետրվարի 2014 թվականի N 24-Ա**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՐՅՈՒՐ ՏՈԿՈՍ՝ ՊԵՏՈՒԹՅԱՆԸ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԲԱԺՆԵՄԱՍ ՈՒՆԵՑՈՂ << ՍԻՍԻԱՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ>> ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՐՄՆԻ՝ ՏՆՕՐԵՆԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասով, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի 2011թ. հոկտեմբերի 5-ի «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարանի ենթակայության հարյուր տոկոս՝ պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող առողջապահական բաժնետիրական ընկերությունների գործադիր մարմինների ընտրության (նշանակման) մրցութային կարգը հաստատելու մասին» N 145-Ն որոշման 6-րդ կետով, **ո ր ո շ ու մ եմ.**

1.Հաստատել Սյունիքի մարզպետարանի ենթակայության հարյուր տոկոս՝ պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող՝ <<Սիսիանի բժշկական կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության գործադիր մարմի՝ տնօրենի ընտրության մրցութային հանձնաժողովի հետևյալ կազմը.

| | |
|---|---|
| Մարդյան Աշոտ | ՀՀ Սյունիքի մարզպետի տեղակալ |
| Ծատրյան Աշոտ | Մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ |
| Ղազարյան Թադևոս | Մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ |
| Կոզմանով Կառլեն | Մարզպետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ |
| Հովհաննիսյան Անահիտ | Մարզպետարանի աշխատակազմի անձնակազմի կառավարման բաժնի պետ |
| Խաչատրյան Գրիշա | Մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄՀ վարչության տեղական ինքնակառավարման և համայնքային ծառայության հարցերի բաժնի պետ |
| Գևորգյան Նունե | Մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության առողջապահության բաժնի պետ |

2. Մրցութային հանձնաժողովի նախագահ նշանակել Աշոտ Մարդյանին:
3. Մրցութային հանձնաժողովի քարտուղար նշանակել Կառլեն Կոզմանովին:
4.Աշխատակազմի ղեկավարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

**ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ** **Վ. ՀԱԿՈԲՅԱՆ**

*2014թ. փետրվարի 21*
*ք. Կապան*